Հավելված N 549
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆինանսական ենթակառուցվածքների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կապիտալի շուկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.26-Մ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5.

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված առաջարկությունների մշակման աշխատանքներին.
2. մասնակցում է ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին.
3. մասնակցում է կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման աշխատանքներին.
4. մասնակցում է ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումներին միտված առաջարկությունների մշակման աշխատանքներին.
5. մասնակցում է կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման, ֆինանսների հասանելիության գործիքակազմի զարգացման աշխատանքներին:

Իրավունքները՝

- **պահանջել** համապատասխան մարմիններից անհրաժեշտ հիմնավորումներ և փաստաթղթեր Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հասանելիությանը և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծությանն ուղղված միջոցառումների իրականացման համար.
- **պահանջել** համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացման, ոլորտը կարգավորող օրենսդրության մշակման,

բարելավման և ներդնման վերաբերյալ.

• մասնակցել համապատասխան մարմինների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման վերաբերյալ քննարկումներին.

• մասնակցել կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների վերաբերյալ քննարկումներին, ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ոլորտի զարգացման վերաբերյալ

• մասնակցել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման վերաբերյալ քննարկումներին.

• մասնակցել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությանն ուղղված համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին, ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից պարզաբանումներ և բացատրություններ:

Պարտականությունները՝

• նախապատրաստել համապատասխան տեղեկատվություն ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծությունն իրականացնելու համար, աջակցել վերջիններիս խթանմանն ու զարգացմանը միտված միջոցառումների մշակման աշխատանքներին.

• պարբերաբար ոլորտի տնտեսավարողներին իրազեկել համապատասխան տեղեկատվությունը.

• **ուսումնասիրել և ամփոփել քննարկումների ընթացքում ստացված տեղեկությունները և առաջադրված առաջարկություններն ու դիտարկումները և կազմել տեղեկանքներ կամ տեղեկատվություն կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող խնդիրների վերաբերյալ.**

• **ուսումնասիրել և ամփոփել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման վերաբերյալ քննարկումների ընթացքում առաջադրված առաջարկություններն ու դիտարկումները և կազմել տեղեկատվություն ոլորտի կայացմանն ու զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ.**

• **ուսումնասիրել և ամփոփել գործարար համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումների արդյունքում ներկայացված դիրքորոշումները և առաջարկությունները, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ մարմիններից ստացված պարզաբանումներն ու կարծիքները, կազմել ամփոփ տեղեկատվություն և ներկայացնել անմիջական ղեկավարին:**

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառներում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. **Փոփոխությունների կառավարում**
2. **Ժամանակի կառավարում**
3. **Փաստաթղթերի նախապատրաստում**

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկությոն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: